«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	Գրական ունկնդրումը առաջին դասարանում
ԱՌԱՐԿԱ՝	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ՝	Մարտիրոսյան Նաիրա Աշոտի
ՄԱՐԶ՝	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝	Շ.Շահամիրյան կրթահամալիր

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

- Ներածություն ……...…….. 2
- ԳԼՈՒԽ I. Գրական ուկնդրման հիմնական նպատակներն առաջին դասարանում ….....… 3
- Գրական ունկնդրման խնդիրները …….. 3
- Հետազոտական մաս …… 3
- ԳԼՈՒԽ II. Ունկնդրման դասերը գրաճանաչության փուլում ……..…… 7
- ԳԼՈՒԽ III. Գրական ունկնդրման ժամերը ընթերցանության փուլում 9
- Իմ փորձից (ընթերցանության փուլ) 12
- Դադար – խաղ ուսուցումը գրական ուկնդրման դասերին ……... 13
- Եզրակացություն 15
- Օգտագործված գրականության ցանկ …… 16

Ներածություն

Լեզուն պահպանելու համար առաջին հերթին այն պետք է սիրել և ճիշտ օգտագործել:

Սիրենք, պահպանենք և օգտագործենք հազարամյակներից ժառանգած մեր մեծագույն գանձը, մեր ինքնության հիմնական գրավականը՝ մեր մայրենի լեզուն:

Երեխան մայրենի լեզվի կրողն է: Նա լավ, թե՝ վատ, ճիշտ, թե՝ սխալ, անընդհատ հաղորդակցվում է, ճանաչում ինքն իրեն, արտահայտում է իր մտքերը, փորձում է հասկանալ և հասկանալի լինել:

ԳԼՈՒԽ Ի. Գրական ուկնդրման հիմնական նպատակները և խնդիրները առաջին դասարանում

Տարրական դասարաններում ընթերցանությունը հիմք է հանդիսանում հետագայում գրականության նկատմամբ հետաքրքրությունների զարգացման, բառապաշարի հարստացման, արժեհամակարգի ձևավորման համար:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել գրական ուկնդրման դերը կրտսեր դպրոցականների ճանաչողական գիտելիքների հարստացման զարգացման գործում:

Գրական ունկնդրման խնդիրները

Կրտսեր դպրոցի խնդիրն է օգնել երեխային գրավոր ու բանավոր խոսքը ճիշտ կազմակերպել, կարողանալ արտահայտել իր հույզերը, զգացմունքներն ու հաղորդակցվել:

Գրական ունկնդրումն՝ ուսուցման կազմակերպման մի տեսակ է, որտեղ պետք է ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով երեխայի առօրյայի, ամենօրյա գործունեության հետ:

Ուսումնական նշված միջավայրը նպաստում է, որ սովորողն առանց սխակվելու վախի արտահայտի իր մտքերը, կարծիքը, հույզերը:

Գրական ունկնդրման դասերը պետք է վարել այնպես, որ երեխաները չհայտնվեն պասիվ ունկնդրի դերում:

Հետազոտական մաս

Ունկնդրման համար գեղարվեստական գրականության ընտրության հարցում պետք է նկատի ունենալ հետևյալ նյութեր.՝

- Բովանդակությամբ՝ մատչելի ու հետաքրքրիր, ծավալով՝ ոչ մեծ, պատմողական և դինամիկ սյուժեյով;

- Բնության, հայրենի երկրի, կենդանիների, ճանապարհորդությունների մասին;
- Երեխաների կյանքից, որոնք կհիշեցնեն սեփական անձի հետ կապված իրավիճակներ;
- Հայ և արտասահմանյան մանկական գրականության դասականների ստեղծագործություններ (արձակ և չափածո);
- Ժողովրդական բանավոր ստեղծագործության նմուշներ;
- Հումորային, զվարճալի պատմություններ;
- Տարաբնույթ նյութեր ՝ հայրենիքի, երեխաների կյանքի, մարդկային փոխհարաբերությունների մասին:

Ունկնդրման միջոցով աշակերտները կընկալեն գրական տեքստը: Ունկնդրումը պետք է նպաստի ՝ խոսքի, երևակայության և մտածողության գործընթացների զարգացմանը: Գրական ստեղծագործության մեջ նկարագրված դեպքերը հուզազգայական վերաբերմունք դրսևորելու կարողություն են ձևավորում: Կողմնորոշվելու կարողություն է ձևավորվում գրական որոշ ժանրերի մեջ (հեքիաթ, պատմվածք, բանաստեղծություն):

Գրական ունկնդրման դասերին ուսուցիչը պետք է օգնի երեխային ձևավորելու նոր արժեհամակարգ, որն էլ հենվում է բարության, սիրո, ընկերասիրության, հոգատարության վրա: Ընթերցասիրության և գրքի հանդեպ սովորողների հետաքրքրության կայացմանը նպաստում է գրական ունկնդրման ժամերի ճիշտ կազմակերպումը:

Այսօր վեց տարեկան երեխան տիրապետում է համակարգչային տարրական գիտելիքների: Տեխնոլոգիաները դարձել են մեր կյանքի անբաժանելի մասը, և առանց դրանց անհնար է պատկերացնել մեր կյանքը: Բայց սա ունի նաև իր բացասական կողմերը: Նվազել է գրքի հանդեպ հետաքրքրությունը: Փոխվել են ուսուցման և կրթության խնդիրները: Երեխային պետք է դաստիարակել առանց ճնշում գործադրելու, հարկադրանքի, այլապես դա կարող է առաջ բերել հիասթափություն ուսման հանդեպ:

Երեխայի ուսուցումը պետք է կազմակերպել հեքիաթի, խաղի ձևով: Գրական ունկնդրման միջոցով փոքրիկը կբացահայտի խոսքի կախարդական հմայքը:

Ունկնդրման կարողությունների զարգացումը կհանգեցնի մի քանի խնդրի լուծման, որոնք են.՝

ա) Ունկնդրումը վերածել խոսքային գործունեության անհրաժեշտ բաղադրամասի և երկկողմանի գործընթացի;

բ) Ունկնդրման նպատակի բացահայտումը;

գ) Հասկանալ ունկնդրված տեքստը;

դ) Ունկնդրելիս ազատ լինել՝ հարցեր առաջադրելու մեջ՝ լավ չընկալածի շուրջ;

ե) Ուշադրություն դարձնել խոսքի ընդհանուր բովանդակությանը;

զ) Ստուգել մտավոր խոսքն ունկնդրելու, մտապահելու կարողությունները:

Ինքնուրույն ընթերցողական ունակությունների ձևավորումը սկսվում է ուսուցման առաջին օրվանից և իրագործվում է փուլ առ փուլ:

<u>I փուլ (նախապատրաստական)</u>: Առաջին դասարան, երբ աշակերտը նոր գրաճանաչ է դառնում:

<u>II փուլ (հիմնական)</u>: Ներառում է II – IV դասարանները:

Նախապատրաստողական և տառուսուցման ընթացքում ուսուցիչը պետք է ցույց տա ընթերցվող գիրքը, կարդա վերնագիրը, հեղինակի անունը: Աշակերտները պետք է կրկնեն:

Հեքիաթն ընթերցելուց հետո ուսուցիչը պետք է գիրքը փոխանցի աշակերտներին: Վերջիններս պետք է դիտեն կազմը, թերթեն էջերը, նայեն նկարազարդումները:

Ունկնդրումն ենթադրում է սովորողի կողմից մի շարք կարողությունների տիրապետում.՝

1) Ընկալել և հասկանալ ունկնդրած տեքստի բովանդակությունը;
2) Վեր հանել կարևոր տեղեկատվությունը;
3) Ամբողջությամբ ըմբռնել գրագրի մանրամասները:

Գրական ունկնդրման դասերն առաջին դասարանում նպաստում են աշակերտի ակտիվ բառապաշարի հարստացմանը՝ նոր բառերով: Ձևավորվում է կարդացածի վերաբերյալ կարծիք հայտնելու ունակություն: Երեխայի մոտ ձևավորվում է՝ կենդանիների, շրջապատող աշխարհի, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք: Երեխան պարզագույն պատկերացում է կազմում շրջակա աշխարհի մասին: Ծանոթանում է հասակակիցների կյանքին, նրանց խնդիրներին:

Երեխան պետք է կարողանա.՝

- Ունկնդրել և ուսուցչի հարցերի օգնությամբ վերարտադրել հեքիաթներ, պատմվածքներ, բանաստեղծություններ;

- Կարծիքներ և տպավորություններ փոխանակել ունկնդրած ստեղծագործության վերաբերյալ;
- Հետևել գրական ստեղծագործությունների դեպքերի զարգացմանը, հերոսների փոխահարաբերություններին և դրանք վերարտադրել նույնությամբ կամ ստեղծագործաբար.
- Պատմել ըստ հիշողության կամ նկարի;
- Նկարել ունկնդրած ստեղծագործության թեմայով, աշխատել բնական նյութերով և դրանք մեկնաբանել;
- Բեմականացնել ստեղծագործություններ և մասնակցել հագուստի, դեկորների ընտրությանը;
- Կազմակերպել մանական նկարների և ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսներ;
- Ստեղծել դասարանական գրադարան;
- Հիշատակել բանահյուսական մատչելի նմուշներ, մաղթանքներ, նամակներ;
- Ընթերցել հումորային ստեղծագործություններ, պատմել զվարճալի դեպքեր սեփական կյանքից:
- Ընթերցել տարաբնույթ նյութեր, խմբերում քննարկել, սեփական կենսափորձից մտաբերել նման օրինակներ:

ԳԼՈՒԽ II. Գրական ունկնդրման դասերը գրաճանաչության փուլում

Այս շրջանում ավելանում են նոր պահանջներ: Վեց տարեկան փոքրիկն արդեն տառաճանաչ է, և առաջանում է նոր խնդիր, այն է՝ սովորել ինքնուրույն ընթերցել փոքրիկ տեքստերը: Նախատեսված տեքստերը պետք է լինել ոչ ծավալուն և հրապուրեն երեխաներին:

Գրական ունկնդրման դասերը կարելի է սկսել մոտ երկուսից՝ երեք րոպե տևողությամբ խոսքային վարժություններից: Դա անհրաժեշտ է, որպեսզի դասամիջոցից հետո երեխաները հեշտությամբ խաղային գործունեությունից անցում կատարեն ուսումնական գործունեությանը և ներգրավվեն ակտիվ մտավոր աշխատանքում: Խոսքային վարժությունների համար շատ հարմար են շուտասելուկները, հանելուկները, բանաստեղծություններն, ոչ ծավալուն հետաքրքրաշարժ տեքստերը:

Երեխաները հաճույքով են անգիր արտասանում խոսքային վարժությունների համար նախատեսված տեքստերը:

Ճիշտ ընտրված հեքիաթները, մանական պատմվածքներն ու բանաստեղծությունները հետաքրքիր և բովանդակալից կդարձնեն գրաճանաչության ողջ ընթացքը, կլրացնեն կարդալու և հաղորդակցվելու կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքները, կլուսավորեն և կմարզեն երեխայի միտքը, կսովորեցնեն խոսել գեղեցիկ գրական հայերենով: Այս փուլում ընթերցում է ուսուցիչը /մեկ ստեղծագործություն/: Օգտվում եմ «Գրական ունկնդրում և խոսք» ձեռնարկից, նախատեսված հանրակթական դպրոցի I – ին դասարանի համար: Ձեռնարկում զետեղված են հեքիաթներ, մանկական պատմվածքներ ու բանաստեղծություններ, ընդհանուր քննարկման նյութեր, նկարազարդման աշխատանքներ, տրամաբանական առաջադրանքներ, «մատնային թատրոն» խմբային և անհատական աշխատանքների համար նախատեսված նյութեր /հեքիաթ՝ ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին/; ըստ նկարի հեքիաթի բովանդակության վերարտադրում «Մրջյունիկի արկածները», ստեղծագործական աշխատանքներ և ձայներիզ: Ձայներիզի նյութերը կարելի է ունկնդրել, ինչպե՞ս դպրոցում, այնպե՞ս էլ՝ տանը, մասնակից դարձնելով նաև ընտանիքի անդամներին և ընկերներին:

Ձեռնարկի նյութերը կարելի է ուսումնասիրել խառը հաջորդականությամբ: Ակտիվ ունկնդրելով ու քննարկելով, կտրել – փակցնելով, խորհելով ու խոսելով, երգելով ու բեմադրելով, ներկելով ու նկարելով, ստեղծագործելով կզարգանա երեխայի բանավոր խոսքը:

ԳԼՈՒԽ III. Գրական ունկնդրման ժամերը ընթերցանության փուլում

Ընթերցանության շրջանում /49 ժամ/ գրական ունկնդրման դասաժամերն անհրաժեշտ է կազմակերպել յուրաքանչյուր շաբաթ՝ մեկ անգամ /7 ժամ/: Այս դասաժամերը տարբերվում են գրաճանաչության փուլում կազմակերպվող գրական ունկնդրման դասաժամերից, քանի – որ երեխաներն արդեն կարողանում են ընթերցել: Այս դասերի կարևորագույն խնդիրն է՝ առաջին դասարանցիներին սովորեցնել ինքնուրույն ընթերցել մանկական գրքեր: Այս փուլում ավելանում են մի քանի նոր պահանջներ: Պետք է սեր արթնացնել երեխաների մեջ ընթերցանության նկատմամբ: Աշակերտները յուրաքանչյուր դասին ծանոթանում են ոչ թե մեկ, այլ՝ երկու ծավալուն գրական ստեղծագործությունների հետ, որոնցի մեկը՝ ինչպես գրաճանաչության փուլում ընթերցում է ուսուցիչը, իսկ մյուսը՝ ինքնուրույն ընթերցում է աշակերտը: Այս երկու ստեղծագործություններն էլ իրար հետ պետք է համապատասխանեն կա՛մ բովանդակությամբ, կա՛մ ժանրով, կա՛մ էլ հեղինակային պատկանելիությամբ:

Մինչ երեխային ինքնուրույն ընթերցանության համար նոր գիրք առաջարկելը, անհրաժեշտ է նախապատրաստել նրան՝ նոր գրքի շուրջ աշխատանքի կատարման համար, ստեղծել պայմաններ, որոնց ընթացքում ճանաչողական հետաքրքրությունը կօգնի աշակերտին հաղթահարել կարդալու տեխնիկայի հետ կապված դժվարությունները:

Աշակերտի ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված ոչ ծավալուն ստեղծագործությունը պետք է հրապուրի երեխաներին և նրանց մեջ առաջացնի ընթերցանության ցանկություն:

Անծանոթ գրքի ինքնուրույն ընթերցանությունն առաջին դասարանցու համար այնքան բարդ աշխատանք է, որ առանց ուսուցչի ժամանակին և ճիշտ մշակված օգնության ոչ բոլոր աշակերտներն են ունակ այն հաղթահարելու: Այս տարիքում երեխաներն ավելի շատ սիրում են ունկնդրել գեղարվեստական ստեղծագործություններ, քան թե՝ ընթերցել: Հարկավոր է սովորեցնել երեխաներին՝ հաղթահարել կարդալու հետ եղած դժվարությունները: Պետք է աշխատանքն այնպես կազմակերպել, որ աշակերտները հաճույք ստանան գրքի հետ ինքնուրույն հանդիպումից:

Գրական նյութերի ուսուցման ժամանակ թվային միջոցների գործածումը նոր մեթոդների կիրառում է ենթադրում: Երեխան լսում, կարդում, ապա նաև իր կարդացածը դիտում է: Շատ արդյունավետ և հետաքրքիր է անցնում գրական ունկնդրման դասաժամը, երբ աշակերտը լսում /կարդում/ ու դիտում է հեքիաթներն, ապա պատմում – ձայնագրում թվային ձայնագրիչով ու նորից լսում, հետո նկարում վրձնով, ինչպես նաև համակարգչով բեմադրում – տեսագրում է՝ դառնալով հեքիաթի կերպար ու հերոս:

Մանկական համաշխարհային գրականությունից անհրաժեշտ է ընտրել այնպիսի նմուշներ, որոնց ընթերցումը խթանում է երեխայի ստեղծագործական միտքը, նպաստում երևակայության զարգացմանը: Օրինակ.՝ Ջանի Ռոդարիի «Շոկոլադե ճանապարհը», Վ. Բիրյուկովի «Քաղաքավարի գորշուկը», Դ. Դիսեթի «Մոռացված ծննդյան օրը» և այլն:

Յուրաքանչյուր դասին աշակերտները պետք է սովորեն ընտրել և կարդալ մանկական գրքեր: Այդ աշխատանքներին կարելի է տրամադրել 10 օր: Երեխաներն ինքնուրույն դիտարկում են անծանոթ գիրքը, իսկ այնուհետև որոնում և ընթերցում են այդ գրքում զետեղված անհրաժեշտ գեղարվեստական ստեղծագործությունը, ուսուցիչն իր հերթին ուշադիր հետևում է, թե ինչ դժվարությունների են հանդիպում երեխաներն աշխատանքի ընթացքում, ինչ սխալներ են թույլ տալիս, ով և ինչու է ժամանակից շուտ դադարեցնում ընթերցանությունը:

Այստեղ պետք է կիրառել շերտավորված ուսուցում:

Թույլ աշակերտները պետք է ստանան ավելի դյուրին, իսկ ուժեղներն՝ իրենց ուժերի ներածին չափով բարդ առաջադրանքներ: Կարելի է թույլ աշակերտին հանձնարարել կարդալ ստեղծագործության վերնագիրը, որը որոշակի տեղեկություն է տալիս, թե ինչի մասին է տվյալ պատմվածքը, հեքիաթը /բանաստեղծությունը/, նկարել աշակերտների մեկ այլ խմբի հետ, կարելի է առաջադրել կարդալ ստեղծագործության մի փոքր մասը: Իսկ այն աշակերտներին, որոնք շատ ավելի լավ են ընթերցում՝ կարելի է տալ լրացուցիչ առաջադրանք, օրինակ՝ ոչ միայն ուղղակի ընթերցել, այլ նաև մտածել ընթերցածի շուրջ տրված որևէ հարցի վերաբերյալ, օգնել ընկերներից որևէ մեկին ընթերցել տեքստը և այլն:

Ես դասարանում ունեմ թույլ աշակերտներ /ԱՈԻՊ/, որոնց կցում եմ ուժեղ աշակերտներին՝ օգնելու և միասին աշխատելու համար: Նման աշխատանքը զարգացնում է երեխաների մոտ փոխօգնության և ընկերասիրության գաղափարը:

Ավորողը սովորեցնում է սովորեցնելով:

Երբ ինքուրույն ընթերցանությունն ավարտվում է, նպատակահարմար է սկզբում լսել թույլ երեխաներին, որոնց առաջադրված էր ըստ վերնագրի և նկարազարդման որոշել ստեղծագործության բովանդակությունը: Անհրաժեշտ է խրախուսել նրանց, ովքեր ջանացել են և տվել են ճիշտ պատասխաններ: Այնուհետև ընթերցացի շուրջ զրույցի ընթացքում անհրաժեշտ է նշել բոլոր նրանց, ովքեր աշխատել են ուշադիր, բարեխիղճ:

Ցանկացած նոր գրքի հետ պետք է ծանոթանալ այսպես.՝

Ուսուցչի հսկողությամբ երեխաներն ուսումնասիրում են գրքի շապիկն, որոնում և գտնում են վերնագիրը, հեղինակի անուն, ազգանունը, թերթում են գիրքը: Աշակերտներից /ուժեղ/ որևէ մեկը բարձրաձայն ընթերցում է սեղմագիրը: Ապա երեխաներն արտահայտում են իրենց ենթադրությունները գրքի բովանդակության մասին: Այնուհետև ուսուցիչը ցուցում է տալիս, թե այդ գրքից, որ ստեղծագործությունն է անհրաժեշտ ընթերցել: Ընթերցելուց հետո անհրաժեշտ է կատարել տարաբնույթ աշխատանքեր տեքստի շուրջ: Կարելի է հանձնարարել տանը նկարել, փնտրել և դասարան բերել նմանատիպ նոր ստեղծագործություններ:

Ես «Գրական ունկնդրում» դասաժամերն անցկացնում են ըստ վերը նշվածի: Աշխատանքի ընթացքում գրատախտակին գրում են մեր նշանաբանը.՝ «ստեղծագործենք այնպես, որ այս գիրքը /ստեղծագործությունը/ հարստանա մեր մտքի և երևակայության պտուղներով: Ուսուցչի կողմից ոգեշնչումը նոր, դրական լիցքեր է տալիս յուրաքանչյուր երեխայի:

Ստեղծագործական վերնագիրը, ժանրը, թեման սովորեցնում են, իսկ ստեղծագործության շուրջ ամբողջ աշխատանքը անցկացնում են երեխայի սկզբնական ընկալումից հետո:

Իմ փորձից (ընթերցանության փուլ)

1) Կատարում եմ խոսքային վարժություններ, որոնց տեքստերն ընտրում եմ այնպես, որ դրանք հնարավորություն ընձեռեն ակտիվացնել երեխաների կենսափորձը: Միևնույն ժամանակ, դրանցում ներկայացված պատկերները պետք է փոխկապակցված լինեն տեքստի բովանդակության հետ:

Օրինակ.՝ հանելուկների առաջադրանքում ՝ աղվեսի, շան և աքաղաղի մասին:

Դրանք նախապես պատրաստում եմ, գրում վահանակների վրա /մի կողմում/, իսկ մյուս կողմում ՝ նկարներն են /պատասխանները/:

Ակնկալվող պատասխանները լսելուց հետո հանձնարարում են բնութագրել կենդանիներին /թռչնին/ իրենց պատկերացմամբ.՝

Աքաղաղ ՝ ազնիվ, միամիտ, լսող;

Շուն ՝ հավատարիմ, ուժեղ, բարի;

Աղվես ՝ խորամանկ, խարդախ, գող:

2) Ապա, որպես դադար փորձում ենք ինչ – որ շարժումով /ձայնով/ նմանակել վերը նշված հերոսներին:
3) Հանձնարարում են բացել Հովհաննես Թումանյանի հեքիաթների գիրքը, ծանոթանալ հեղինակի հետ, և գուշակել, թե որ հեքիաթն ենք կարդալու /կարելի է նաև ուղղորդել/:

Ընթերցանությունը սկսում եմ /շերտավոր/ անհատական մոտեցում ցուցաբերելով: Թույլ աշակերտին հանձնարարում են կարդալ վերնագիրը և խորհել, թե ինչի մասին կարող է լինել հեքիաթը: Միջին ունակություններ ունեցող աշակերտներին հանձնարարում են ընթերցել տեքստի մի հատված: Իսկ ուժեղ աշակերտներին հանձնարարում են արդեն ընթերցել ամբողջ տեքստը և մտածել գրատախտակին գրված հարցի շուրջ:

Կարդալուց հետո բացատրում ենք անհասկանալի բառերն ու բառակապակցությունները /կարելի է դու գիտենաս, խոսքը մին արին, սանահեր ... /:

Փորձում ենք ճիշտ պատասխանել: Ուկնդրած հեքիաթը վերարտադրում ենք, օգտվելով բանալի բառերից, որոնք աշակերտների օգնությամբ գրվել են գրատախտակին:

Կատարում ենք ստեղծագործական աշխատանք՝ հեքիաթի նկարազարդման, բովանդակության, հերոսների կերպարի շուրջ.՝

- Նկարը համեմատել հեքիաթի բովանդակության հետ;
- Հեքիաթի ո՞ր դրվագն է ներկայացված նկարում /կարելի է և՛ պատմել, և՛ կարդալ այդ հատվածը;
- Նկարագրել հերոսներին: Ինչպես են խոսում կամ ինչ են խոսում ... :

Հանձնարարում եմ խմբային աշխատանք:

Աշակերտներին բաժանում եմ երեք խմբի: Առաջին խումբը մտածում է նոր վերնագիր, երկրորդ խումբը փոխում է հերոոներին /այլ կենդանիների/ և երրորդ խումբը մտածում է հեքիաթի այլ ավարտ:

Լսում և քննարկում ենք խմբերի պատասխանները:

Խրախուսվում են բոլորը:

Դադար – խաղ.՝ «Գուշակիր ով եմ ես»

Հարցաշար.՝

- Խորամանկ եմ և շատակեր;
- Ո՞ր կենդանու հետ եմ ազգակից;
- Ի՞նչ եմ շատ սիրում ուտել;
- Որտե՞ղ եմ ապրում;
- Ո՞վ է իմ թշնամին;
- Ի՞նչ խորհուրդ կտաք ինձ:

Հարցերին պատասխանում են բոլորը:

Դասի ամփոփում:

Հեքիաթի հիմնական իմաստի վեր հանում:

Կարելի է կազմել քառաբաժան.՝

Ի՞նչ տեսա	Ի՞նչ լսեցի
Ի՞նչ զգացի	Ի՞նչ հասկացա

Տեխնոլոգիայի ժամին պատրաստած տիկնիկներով որոշեցինք ներկացանել հեքիաթի նոր տարբերակ /ստեղծագործում են երեխաները/:

Որպես տնային աշխատանք երեխաներին հանձնարարվեց նկարել հեքիաթի իրենց ընտրած հերոսին և ընկերներին պատմել բովանդակությունը:

Շատ կարևոր է աշակերտների հետ քննարկել տեքստի շուրջ կատարվող աշխատանքները: Երեխան պետք է կարդա հասկանալով, ընկալի տեքստի հիմնական միտքը:

Ընկալելուց հետո կարևոր է, որ երեխան կարողանա վերարտադրել, այսինքն՝ պատմել տեքստի հիմնական բովանդակությունը՝ փոփոխելով առանձին բառեր կամ նախադասություններ: Վերապատմելիս չի կարելի փոխել տեքստի բովանդակությունը:

Եթե ուսուցչի կողմից հանձնարարվում է մտածել նոր ավարտ կամ փոխել հերոսներին, ապա այդ դեպքում խնդիրն այլ է:

Երեխաներին շատ հոգեհարազատ են նկարագրական տեքստերը /հեքիաթ, պատմվածք, հանելուկ ... /:

Կարելի է առաջադրել վերնագիր կամ նկարներ, ու հանձնարարել հորինել պատմություն կամ ուսումնասիրվող տեքստի համար աշակերտները կարող են ընտրել համապատասխան վերնագիր՝ առաջադրված տարբերակներից:

Այստեղից հետևություն, որ վերնագիրն արտահայտում է տեքստի հիմնական թեման կամ հիմնական իմաստը, բովանդակությունը:

Գրական ունկնդրման ժամերի հիմնական խնդիրներն են՝ ընթերցանությունը, բատապաշարի հարստացումն ու բանավոր խոսքի զարգացումը:

Երեխան պետք է կարողանա ընթերցել հասկանալով, ընկալել կարդացած տեքստի իմաստն ու բովանդակությունը:

Երեխան պետք է հասկանա, որ մայրենի լեզուն սովորում են ո՛չ միայն և ո՛չ այնքան դասերը լավ պատասխանելու, այլ նաև պատմելու, հաղորդակցվելու, ասելու, զրուցելու, կարդալու, խորհուրդ տալու և այլնի համար:

Եզրակացություն

Ուսումնասիրելով ուսումնա – մեթոդաբանական ձեռնարկները, ծրագրերը, մասնագիտական գրականությունը կատարեցի հետազոտական աշխատանք և եկա հետևյալ եզրակացությունների.՝

1) Բոլոր այս ձեռնարկներն ու ծրագրերը միտված են մեկ նպատակի ՝ զարգացնել սահուն և արտահայտիչ ընթերցանության զարգացման կարողությունը;
2) Տարրական դպրոցի դասագրքերում կան այնպիսի թեմաներ, որոնք կորցրել են իրենց արդիականությունը և այլևս հետաքրքիր չեն աշակերտներին;
3) Եկա այն եզրակացությանը, որ հենց սահուն ընթերցանությունն է զարգացնում և ձևավորում հարուստ բառապաշար, կապակցված խոսք կառուցելու և նաև դատողություններ անելու կարողություններ;
4) Նաև կատարելով տարբեր աշխատանքներ նույն բնագրի շուրջ ՝ աշակերտը ձեռք է բերում լավ և հասկանալով կարդալու կարողություն, և նաև կարդալու ցանկությունը չի մարում:

Օգտագործված գրականության ցանկ

Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան – «50 հարցուպատասխան»;

Կ. Թորոսյան – «Խոսք և հաղորդակցություն»;

Ա. Քյուրքչյան, Լ. Տեր – Գրիգորյան – «Մայրենի 1. ուսուցչի ձեռնարկ»: